

# ԿՐՈՆԱԵԿԵԴԵՑԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ՍԻԼՎԱ ՊԱՊԻԿՅԱՆ

Հայերենի կրոնաեկեղեցական տերմինները բառակազմական վերլուծության ենթարկելով՝ հնարավորություն ենք ստանում պարզելու այս ենթահամակարգի տերմինակազմության օրինաչափությունները, առավել կենսունակ կաղապարները: Այս տերմինահամակարգում տերմիններ հիմնականում դառնում են գոյականները: Ըստ կազմության՝ կրոնաեկեղեցական տերմինները լինում են միաբառ և բառակապակցական: Միաբառ տերմիններն իրենց հերթին լինում են արմատական, ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր: Առանձնացվում են բարդ տերմինների տերմինային և ձևաբանական կաղապարները: Տերմին - բառակապակցություններն արտահայտում են որոշիչ-որոշյալի և հատկացուցիչ- հատկացյալի հարաբերություններ:

**Քանալի բառեր** – կրոնաեկեղեցական տերմիններ, գոյական, բարդ տերմիններ, ձևաբանական կաղապարներ, տերմինային կաղապարներ:

Համագործածական բառերի նման տերմինակազմությունը կատարվում է բառակազմական որոշակի կանոնների համաձայն: Տերմիններն ունեն մի առանձնահատկություն. դրանք «ստեղծվում են»<sup>1</sup> անհրաժեշտության թելադրանքով:

Ինչպես հայտնի է, տերմիններ հիմնականում դառնում են լիմաստ խոսքի մասերը: Գոյականներն իրենց անվանողական դերով առավել մեծ քանակ են կազմում: Ածականներն ու թվականները հիմնականում դառնում են բառակապակցական տերմինների բաղադրիչներ: Կրոնաեկեղեցական բնույթի բառերի մեջ հանդիպում են նաև տարարժեք բառեր<sup>2</sup>, որոնք այս տերմինահամակարգում հանդես են գալիս որպես երկակի գործառություն ունեցող բառեր: Այս տերմինահամակարգում տարարժեքություն արտահայտող բա-

---

<sup>1</sup> Г.О.Винокур, О некоторых явлениях словообразования в русской технической терминологии, М.-Л., 1959, с. 24.

<sup>2</sup> Տարարժեք բառերի հանգամանալից քննություն կատարել է պրոֆ. Լ. Խաչատրյանը «Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում», «Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան», «Գրաբարի բացատրական բառարան» (ձևաբանորեն տարարժեք բառեր) աշխատություններում և բազմաթիվ հոդվածներում:

ները հիմնականում երկարժեք են. կարելի է նշել և՛ որպես գոյական, և՛ որպես ածական հանդես եկող բառեր, ինչպես՝ *աղոթական, անեղ՝* «գ., աստված, ած., չեղած», *ավերարանական, բեմական, եկեղեցական, ժողովող, երեց, հավա- րացյալ, հեթանոս, մաքաղ, հրաշք, նեո, շուշպակ, սուրբ, տեր* և այլն, հա- մեմատաբար քիչ են ածական- մակբայ համատեղումներով բառերը՝ *առա- քելաբար, աստվածորեն, ավերալից, հեթանոսաբար, հեթանոսական* և այլն:

Հայերենի կրոնանեկեղեցական տերմինները բառակազմական վերլու- ծության ենթարկելով՝ հնարավորություն ենք ստանում պարզելու այս ենթահա- մակարգի տերմինակազմության օրինաչափությունները, առավել կենսունակ կաղապարները:

Հայերենում կրոնանեկեղեցական տերմիններն արտահայտվում են մեկ բառով կամ բառակապակցությամբ: Միաբառ (համադրական) կրոնանեկեղե- ցական տերմինները լինում են արմատական, ածանցավոր, բարդ և բար- դաձանցավոր: Բառակապակցական տերմինները բաղադրված են տարբեր խոսքի մասերով՝ գոյական + գոյական, ածական+գոյական, գոյական+դերբայ և այլն, և արտահայտում են տարբեր շարահյուսական հարաբերություններ՝ որոշչի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի:

Կատարել ենք կրոնանեկեղեցական բնույթի բառերի համաժամանակյա քննություն:

### **1. Միաբառ (համադրական) տերմիններ**

**Արմատական տերմիններ:** Արմատական տերմիններն իրենց պարզ կազմության շնորհիվ հեշտությամբ յուրացվում են: Տերմինային կիրառության տեսակետից նույնպես դրանք հարմար են՝ կարճ, դիպուկ, հասկանալի:

Ինչպես գրում է ակադ. Գ.Ջահուկյանը. «Լեզվի զարգացման յուրաքանչ- յուր փուլում լինում են ա/ բառեր, որոնք այդ լեզվով խոսողների գիտակ- ցության մեջ հանդես են գալիս որպես անվերլուծելի տարրեր, թեև պատմա- կանորեն դրանք կարող են բաղադիր լինել...»<sup>3</sup>: Այդ պատճառով կարևոր է նկատի ունենալ լեզվի զարգացման շրջանները, քանի որ լեզվի անցյալ փուլում բառը կամ տերմինը կարող է արմատական չլինել, ինչպես գիտակցվում է այժմ:

Հայերեն կրոնանեկեղեցական արմատական տերմիններ՝ *աջ* (որոնց մեջ պահվում են սրբերի մասունքները), *երեց*, *է*, *ընծա*, *խաչ*, *կարգ*, *հոգի*, *հովիվ*,

<sup>3</sup> Գ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 150:

հոյս, մաքաղ, սուրբ, Կոն և այլն:

Կրոնաեկեղեցական արմատական տերմինները կենսունակ են, գործածվում են մեծ հաճախականությամբ, մասնակցում են բաղադրյալ բառերի կազմությանը (աժանցում, բարդացում), դառնում են հիմնական բաղադրիչ կապակցական տերմինների կազմության մեջ:

Արմատական են համարվում նաև փոխառյալ տերմինները, որոնք փոխատու լեզվում գուցեև բաղադրյալ են եղել, սակայն փոխառու լեզուն չի տարբերակում այդ դրանք գիտակցվում են որպես պարզ, արմատական տերմիններ: Հայերենի կրոնաեկեղեցական տերմինահամակարգում փոխառությունների տեսակարար կշիռը մեծ է: Այդ փոխառությունների հիմնական մասը հին կամ հնագույն փոխառություններ են՝ կատարված ասորերենից, հունարենից և իրանական լեզուներից: Դրանց մի մասը պատմական զարգացման, հասարակական-քաղաքական իրադարձությունների, գաղափարախոսության փոփոխության հետևանքով դուրս է եկել գործածությունից, մի մասն իմաստափոխվել է, մյուս մասն էլ իր առաջնային նշանակությամբ գոյատևել է մինչև հիմա:

Փոխառյալ արմատական կրոնաեկեղեցական տերմիններ՝ աբեղա, ագապ, ալելուիա, ամեն, բախտ, դաբիր, դրախտ, եղեմ, եպիսկոպոս, ծոմ, կախարդ, կաթողիկոս, կանոն, կոնդակ, հերետիկոս, հրեշ, հրեշտակ, մամոնա, մարտիրոս, մեռոն (մյուռոն), մոգ, մոմ, քահանա, քարոզ, քերովբե, օվսաննա և այլն:

Որոշ փոխառյալ բառամիավորներ փոխատու լեզվում նախադասություններ կամ արտահայտություններ են, որոնք, սակայն, հայերենում դիտվում են որպես մեկ բառ, ինչպես՝

*Ալելուիա* (բերայերեն) - «Գովեցե՛ք, փառաբանեցե՛ք Աստծուն»

*Կիրէլէիստն* (հունարեն) - «Տե՛ր, ողորմես»

*Մարանաթայ* (ասորերեն) - «Տերը գալու է, զգո՛ւ՛շ եղեք»

*Պոսէթէու* (հունարեն) - «Մերձեցի՛ր, ո՛վ Աստված»

*Սիկիրիէ* (հունարեն) - «Քե՛զ, Տե՛ր» (Ս.Պտրգ.)

*Օրթի* (հունարեն) - «Ուղիղ կանգնեցե՛ք» (ավետարանի ընթերցումը լսելու համար):

## 2. Բաղադրյալ տերմիններ

**ա) Աձանցավոր տերմիններ:** Աձանցումն ինչպես ընդհանուր բառապաշարում, այնպես էլ տերմինակազմության մեջ ունի կարևոր դեր: Աձանցներն իրենց համակարգող հատկանիշի շնորհիվ հնարավորություն են տալիս

տերմինաբանությունը համակարգելու ոչ միայն բառակազմական, այլև իմացաբանական-հասկացական տեսակետից:

Կրոնաեկեղեցական տերմինների կազմությանը մասնակցում են գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և բայական ածանցները: Նախաձանցավոր կազմությունները քիչ են: Ընդհանրապես նկատելի է, որ բոլոր գիտակարգերի տերմինահամակարգերում վերջաձանցներով կազմված տերմինների քանակը գերազանցում է նախաձանցներով կազմվածներին:

Գոյականակերտ վերջաձանցներից կրոնաեկեղեցական տերմինակազմությանը մասնակցում են *-անոց*, *-անք*, *-արան*, *-արար*, *-անք*, *-ություն*, *-ուիի*, *-ք* և այլն.

*-անոց* - աղոթանոց, եղբայրանոց, եպիսկոպոսանոց, միանձնանոց, կուսանոց,

*-անք* - աղաչանք, կախարդանք, մաղթանք, մեղանք, մեղանչանք,

*-արան*- աղոթարան, եպիսկոպոսարան, կաթողիկոսարան, սրբարան, պատարագարան, վեհարան,

*-ություն* - աղոթականություն, եկեղեցականություն, ընծայություն, կրոնավորություն, հեթանոսություն,

*-ուիի* - աստվածուհի, կախարդուհի, հրեշտակուհի, միանձնուհի, սարկավագուհի, վանականուհի, վանուհի (տարբեր է Վանուհի անձնանունից, որ Վան քաղաքի անունից է), սրբուհի,

*-ք* - աղոթք, անեծք, մաղթանք, մեղք, նզովք, վանք:

Նախաձանցներից կարող ենք նշել՝ *ան*- անաստված, անապաշխար, անհավատ, *հակ*՝ հակաքրիստոս, *նախ*՝ նախէ, նախագուշակ, նախընծա, նախասարկավագ, նախավկա և այլն:

Ածականակերտ վերջաձանցներից կրոնաեկեղեցական տերմինակազմությանը մասնակցում են՝ *-ական*՝ աստուածական (ՆՀԲ), աղոթական, կրոնական, մաղթական, մաղթողական, մոգական, հեթանոսական, հմայական, քրիստոնեական, *-ավոր*՝ հոգևոր, վեղարավոր, *-ային*՝ աստվածային, դիվային, եկեղեցային, կրոնային, սրբային, *-եղեն*՝ աստուածեղեն (ՆՀԲ) և այլն:

Ածականակերտ վերջաձանցներով կազմված տերմինները դառնում են բառակապակցական տերմինների բաղադրիչներ և հանդես են գալիս որոշի դերում՝ *կրոնական արարողություն*, *մոգական հնարք*, *հեթանոսական կրոն*, *հմայական աղոթք* և այլն:

Մակբայակերտ վերջաձանցներից գործածական են՝ *-բար*՝ աստվածահրաշաքար, դիվաքար, եկեղեցաքար, կախարդաքար, հեթանոսաքար, հրեշ-

տակաբար, քրիստոսաբար, **-պես**՝ կրոնավորապես, սրբավայելչապես, **-որեն**՝ հեթանոսորեն, քրիստոսորեն, բայական ածանցներից՝ **-ալ**՝ արիոսանալ, սրբանալ, քրիստոնեանալ, **-ել**՝ ապաշխարել, դժել, կախարդել, կրոնավորել, հմայել, պատարագել, սրբացնել, սրբապղծել և այլն:

Կրոնաեկեղեցական ածանցավոր տերմինների քննությունը ցույց է տալիս, որ տերմինակազմությանը հիմնականում մասնակցում են գոյականակերտ վերջածանցները:

**բ) Բարդ տերմիններ:** Բառաբարդումը հայերենի բառակազմության ամենակենսունակ միջոցն է: Կրոնաեկեղեցական տերմինակազմությանը հիմնականում մասնակցում են իսկական (բուն) բարդությունները: Մեծ թիվ են կազմում հոդակապով բուն բարդությունները՝ *աղոթակից, աղոթապուն, անեծքաչոր, անեծքամոր (մորից անիծված), դիցապաշտ, երդմնասուր, երդմնահար (անընդհար երդվող), եկեղեցագավառ, եկեղեցակարգ, երիցապետ, կրոնասեր, հոգեհաց, հոգեթաս, հոգեգալուստ, երկայնահոգի, հեթանոսամիտ, հրեշտակապետ, մաղթակից, մասնապրուփ (որի մեջ պահում են սրբերի մասունքներ), մեղապարտ, մեղսաբեր, նզովագիր, նզովախոս, սրբագումար, սրբակրոն, սրբալույս, քրիստոսասեր* և այլն:

Անհոդակապ բարդություններ՝ *աղոթերգ, աղոթասաց, աստվածեղբայր, աստվածընտիր, աստվածորդի, երդմնուրաց, երիցկին, հրեշտակերամ, վաներեց, քարոզգիրք, քրիստոսուրաց* և այլն:

Կրոնաեկեղեցական տերմիններ կազմելիս որոշ տերմիններ կազմում են տերմինաշարքեր, ինչպես.

**աստված** - *աստվածընկալ, աստվածորդի, աստվածերկյուղ, աստվածապուր, Աստվածաշունչ, աստվածամայր, աստվածավախ* և այլն,

**աղոթ** - *աղոթասեր, աղոթապուն, աղոթակից, աղոթաձայն, աղոթականչ, աղոթամատյան,*

**ընծա** - *ընծայական, ընծայաբեր, ընծայապար, առաջընծա, նորընծա, պոնընծա,*

**հոգի** - *հոգեգալուստ, հոգեհաց, հոգեվարք, դառնահոգի, հեզահոգի*

**սուրբ** - *սրբահամ, սրբահառաչ, սրբահոգի, սրբամաքուր, սրբանվագ, սրբաշեն, սրբապահ* և այլն:

Մեծ թիվ են կազմում Քրիստոս բառով կազմված բարդ տերմինները<sup>4</sup>, ինչպես՝ քրիստոսադավ, քրիստոսադավան, քրիստոսածին, քրիստոսանենգ, քրիստոսանվեր, քրիստոսապաշտ, քրիստոսասեր և այլն: Լ.Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանում» Քրիստոս-ով բաղադրված են քրիստոսածալալ, քրիստոսահիմն, քրիստոսամատն, քրիստոսանիշ, քրիստոսանմանութիւն, քրիստոսապահ, քրիստոսապատառ, քրիստոսաւետեալ, քրիստոսափառ (էջ 290,291), ՆԲ-ում՝ քրիստոնեաբանություն, քրիստոնեավարական, քրիստոնեավարություն, քրիստոսաեջ, քրիստոսակերտ, քրիստոսաշունչ, քրիստոսավայել, քրիստոսատիպ բառերը (ՆԲ, 482):

Ըստ բարդ տերմինի բաղադրիչների տերմինայնության՝ կրոնակեղեցական տերմինները կարելի է ներկայացնել տերմինային կաղապարներով: Առանձնացրել ենք հետևյալ կաղապարները.

1. տերմիններ, որոնց երկու բաղադրիչն էլ տերմին են՝ S+S՝ *դիվապաշտ, դիցապաշտ, հրեշտակակրոն, մոգակրոն, սրբակրոն*,

2. տերմիններ, որոնց առաջին բաղադրիչը ոչ տերմին է, երկրորդը՝ տերմին՝ ոչS+ S, ինչպես՝ *լուսահոգի, մահագուշակ*,

3. տերմիններ, որոնց առաջին բաղադրիչը տերմին է, երկրորդը՝ ոչ տերմին՝ S+ոչS, ինչպես՝ *աղոթակից, աստվածընկալ, հրեշտակագումար, նզովագիր, սրբախոս, քահանայապետ*,

4. տերմիններ, որոնց երկու բաղադրիչն էլ ոչ տերմին են՝ ոչS+ ոչS՝ *ծխապեր, ծխապրոն* (քահանա ունեցող ընտանիք, քահանայատուն), *փակակալ* (եկեղեցու բանալիները պահող մարդ) (արևմտ.):

Կարելի է առանձնացնել նաև կրոնակեղեցական բարդ տերմինների ձևաբանական կաղապարները՝ հաշվի առնելով, թե տերմինի բաղադրիչներն ինչ խոսքի մասի են պատկանում: Ըստ այդմ՝ առանձնանում են հետևյալ ձևաբանական կաղապարները.

1. գոյական+գոյական՝ *հրեշտակակարգ, հրեշտակերամ, մարգարեաժողով, մեհենազարդ, պատարագագոհ*,

2. ածական+ գոյական՝ *թովչաձայն, սրբալույս, սրբաձայն, սրբատեղ*,

3. գոյական +ածական՝ *հրեշտակագեղ, հրեշտակախառն*,

4. ածական+ածական՝ *սրբամաքուր, սրբապիղծ*,

<sup>4</sup> Տե՛ս Դ.Գյուրջինյան, Կրոնակեղեցական լեզվական միավորների քննություն, Ս.Էջմիածին, 2002, էջ 23-34:

5. գոյական+բայահիմք կամ բայարմատ՝ *աղոթահայց* (աղոթքով հայցված), *եղեմաբուխ*, *կրոնասեր*, *հրեշտակազոր* (հրեշտակից զորացած), *հրեշտակամորթ* (հրեշտակի մորթած՝ հիվանդ անասունը մորթելը), *հրեշտակակոխ* (հոգեառ հրեշտակի կոխած), *մեղսածին*, *մեղսապոյաց*, *պատարագընկալ* (պատարագն ընդունող, աստված), *քրիստոսապոյաց*, *քրիստոսասեր* և այլն:

Կրոնաեկեղեցական տերմինահամակարգում զգալի թիվ են կազմում բայական հարադրությունները: Բովանդակության պլանում դրանք մեկ բառային իմաստ են արտահայտում, օրինակ՝ աղոթք անել, աղոթքի կանգնել (ծնկել՝ աղոթելու համար), աղօթս առնուլ (ՆՀԲ՝) (օրհնվել), անեծք թափել, աստվածաթափուր լինել (ՆԲ, 58), երդում-պատառ լինել, երդում-կրակ ուտել, ընծայաբեր լինել, ժամ անել (1.պատարագ մատուցել, 2. ննջեցյալի հիշատակին հոգու հաց տալ), ժամ կանչել (եկեղեցի հրավիրել), ժամ առնել (պատարագ մատուցել), հոգեդարձ լինել, հոգին ավանդել, հոգուն մեղք անել, հոգու պարտքը լինել, մեղքը մտնել և այլն:

**գ) Բարդածանցավոր տերմիններ:** Բարդածանցումը բարդացման և ածանցման համակցությամբ նոր բառերի կազմումն է: Այս եղանակով կազմված տերմինները բավականին մեծ քանակ են կազմում այս տերմինահամակարգում. դրանք հիմնականում ածանցման միջոցով կազմվում են համադրական բարդություններից, ինչպես՝ աղոթակայություն, աղոթամատույց, աղոթարկու, անիծադրություն, դիվահմայություն, երդմաստություն, հրաշագործություն, մեհենատեղի, պատարագամատույց, սրբապղծություն, սրբանունդ և այլն:

### **3. Բառակապակցական տերմիններ**

Բառակապակցական տերմինների մասին մասնագետների կարծիքները տարբեր են: Մասնագետների մի մասը գտնում է, որ տերմինային այս կառույցները նույնական են ազատ բառակապակցությունների հետ, մյուսները՝ դարձվածաբանական միավորների հետ, մի մասն էլ նմանեցնում է միաբառ տերմիններին:

Բառակապակցական տերմիններն ամբողջական միավորներ են: Ինչ վերաբերում է դարձվածաբանությանը, որն արտահայտում է աշխարհի «պատկերավոր նկարագիրը» (դարձվածքները կայուն, վերաիմաստավորված, պատրաստի միավորներ են), բառակապակցական տերմիններն ունեն ավելի շատ բնորոշիչ հատկանիշ և հանդես են գալիս որոշակի տերմինահամակարգերում՝ ի հակադրություն դարձվածաբանական միավորների, որոնք հանդես են գալիս ընդհանուր բառապաշարում:

Բառակապակցական տերմիններն ընդհանրություններ ունեն միաբառ տերմինների հետ: Ակադ. Վ. Վինոգրադովը բառակապակցությունը սահմանում է. «Բառակապակցությունը բարդ անվանումն է (именование)»<sup>5</sup>: Այն կատարում է նույն անվանողական դերը, ինչ բառը:

Մասնագետների մեծամասնությունը գտնում է, որ բառակապակցական տերմինները պետք է դիտել որպես բառային մակարդակի առանձին միավորների՝ չնույնացնելով դրանք ո՛չ ազատ բառակապակցությունների, ո՛չ դարձվածաբանական միավորների և ո՛չ էլ միաբառ տերմինների հետ<sup>6</sup>:

Կրոնաեկեղեցական տերմինահամակարգում որոշակի քանակ են կազմում բառակապակցական տերմինները: Դրանք հիմնականում երկանդամ կառույցներ են՝ բաղկացած երկու բաղադրիչից՝ միջուկային տերմինից (միջուկից) և ծավալիչից<sup>7</sup> (կարող են լինել նաև բազմանդամ): Երկանդամ կապակցական տերմինի բաղադրիչներից մեկը՝ միջուկը, արտահայտվում է գոյականով, իսկ մյուս բաղադրիչը՝ ծավալիչը, կարող է լինել գոյական, ածական և այլն:

Կրոնաեկեղեցական տերմինահամակարգում հանդիպող բառակապակցական տերմիններ՝ *աջանման մասանց պահարան* (դրանց մեջ պահվում են սրբերի մասունքներ), *առաջնորդ ընծայման* (կնքահայր), *երիցանց երեց* (քահանայապետ), *երկնքի արքայություն*, *Երկնային թագավոր*, *ընծայոց սեղան* (եկեղեցու պահարան, որտեղ պահում են ընծաները), *թուղթ ընծայության* (ընծայական գիր, հավատարմագիր), *կոչումն ընծայության* (ընթերցվածագիր՝ ընթերցվածներ պարունակող գիրք)՝ ընթերցված-հատված Ս.Գրքից, որ տվյալ օրը կարդացվում է եկեղեցում), *լուսո հրեշտակ*, *հոգեառ հրեշտակ*, *պահապան հրեշտակ*, *թիվ պատարագ* (առանց երգեցողության պատարագ, որ քահանան կատարում է լուսությամբ), *կից պատարագ* (առավոտյան ժամերգությունից հետո կատարվող պատարագ), *ճաշու պատարագ* (կատարվում է ճաշի ժամին), *սրբոց տոն*, *պատճառի տոնից* (տոնապատճառ), *սրբություն սրբոց* (վկայության խորանի ներքին մասը, որտեղ պահվում էր Ուխտի տապանակը, փխբ.՝ ամենասուրբ), *տերունական տուն* (եկեղեցի), *տերունական օր* (կիրակի) և այլն:

<sup>5</sup> В.Виноградов, Русский язык (Грамматическое учение о слове), М.-Л., 1947, с. 8.

<sup>6</sup> Այս մասին տե՛ս Լ.Հ.Ղազանյան, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային քննություն, Լեզվի և ոճի հարցեր, Ե., 1977, էջ 292-302:

<sup>7</sup> Է.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1987, էջ 342:



## СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЙ АНАЛИЗ АРМЯНСКИХ РЕЛИГИОЗНО-ЦЕРКОВНЫХ ТЕРМИНОВ

СИЛЬВА ПАПИКЯН

Словообразовательный анализ армянских религиозно-церковных терминов позволяет выявить наиболее продуктивные модели и закономерности терминообразования. В этой области терминами в основном становятся имена существительные. Армянские религиозно-церковные термины по образованию подразделяются на однословные и словосочетания. Однословные термины, в свою очередь, подразделяются на корневые, производные, сложные и сложно-производные. Выделяются терминологические и морфологические модели сложных религиозно-церковных терминов. Термины-словосочетания выражают соотношение определение-определяемое.

**Ключевые слова** – религиозно-церковные термины, имена существительные, сложные слова, терминологические модели, морфологические модели, словосочетания.

## THE WORD-BUILDING ANALYSIS OF ARMENIAN RELIGIOUS-ECCLESIASTICAL TERMS

SILVA PAPIKYAN

The word-building analysis of Armenian religious-ecclesiastical terms enables us to identify the patterns of term formation, the most productive models of this subsystem. In this field, terms are mainly coined from nouns. They are divided into single-word, or synthetic terms, and word combinations. The former are in turn subdivided into root, derivative, compound, and compound-derivative terms. Distinguished are terminological and morphological models of compound religious-ecclesiastical terms. The components of terms-collocations relate as attributes and definable words.

**Key words** – religious-ecclesiastical terms, nouns, derivative, terminological models, morphological models, collocations.